

Կարծիք

Ես՝ Լուիդա Արմենի Միքաելյանս, ընդունվել եմ Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի բժշկական քոլեջի «Դեղագործություն» բաժինը։ Ավարտելուց հետո ուսումն շարունակել եմ նույն ինստիտուտում՝ «Դեղագիտություն» մասնագիտությամբ։ 2014թ. ավարտել եմ վերոհիշյալ բուհը և անմիջապես աշխատանքի եմ անցել «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» դեղատնային ցանցում՝ հանձնելով աշխատանքի ընդունվելու համար պահանջվող անհրաժեշտ առեստավորումը և ցուցաբերելով այդ բնագավառի համար անհրաժեշտ հմտություններ՝ շնորհիվ ուսումնառության ընթացքում ստացած գերազանց գիտելիքների։ Այս ամենը ես սովորել և ուսումնասիրել եմ առաջին հերթին բարձր որակավորում ունեցող իմ դասախոսների դասախոսություններից և երկրորդ հերթին անցնելով եզրագույն պրակտիկա Ալ. Մնջոյանի անվան Նույր օրգանական քիմիայի լաբորատորիաներում։

Ինչպես Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի, այնպես էլ Մնջոյանի անվան Նույր օրգանական քիմիայի լաբորատորիաները հագեցած են այս անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով, որոնք անհրաժեշտ են փորձերի կատարման, տեսական նյութը յուրացնելուն և լավ մասնագետ դառնալու հիմքերը ստեղծելուն։

Վերոհիշյալի ապացույցն է 2017թ. ԿԳ նախարարության կողմից կազմակերպված ամփոփիչ առեստավորման պետական քննությանը իմ մասնակցությունը և գերազանց գնահատականով հանձնումը։

2017/2018 ուս. տարում սովորել եմ նույն ինստիտուտի «Քույրական գործ» բաժնում՝ երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու նպատակով։ Փորձի և գիտելիքների փոխանակման նպատակով 3-րդ կուրսում քոլեջի կողմից մեկնել եմ Լատվիայի Դառնագավառի քաղաքի բժշկական քոլեջ, որտեղ նույնպես հարստացրել եմ գիտելիքներս արդեն «Քույրական գործ» մասնագիտությամբ։

«Դեղագիտություն» մասնագիտության շրջանավարտ և ներկայում «Քույրական գործ» մասնագիտության III կուրսի ուսանողութիւն Լուիդա Միքաելյան։

